

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2020 թ. դեկտեմբերի 4-ին կայացած թիվ 4 առցանց նիստի

Գիտական խորհրդի 41 անդամներից նիստին մասնակցել են 30-ը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը՝ դեկան, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, մինչ օրակարգին անցնելը խորը վշտով հայտնեց, որ կյանքից անժամանակ հեռացել է ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Համբարձումի Թոչունյանը: Նա նշեց, որ Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը կրեց ցավալի ու ծանր կորուստ և խորին ցավակցությունները հայտնելով առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել ականավոր գիտնական, պրոֆեսոր Ա.Հ. Թոչունյանի հիշատակը:

Օրակարգում ներկայացված էր դեկանի տարեկան հաշվետվության հարցը, հետևաբար առաջարկվեց առաջադրել նախագահողի թեկնածություններ: Գիտական խորհրդի անդամների կողմից առաջադրվեց դեկանի տեղակալ, կ.գ.թ. Կ.Ա. Ղազարյանի թեկնածությունը, ով բաց քվեարկությամբ ընտրվեց որպես նախագահող: Այնուհետև նախագահողը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատվեց:

Օրակարգ՝

1. Կենսաբանության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը (զեկուցող՝ դեկան Է.Ս. Գևորգյան):
2. Ընթացիկ հարցեր:
 - ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտների գիտական ղեկավարների փոփոխության հարցը:
 - ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտներին որպես թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարներ հանդես գալու թույլատվության համար ԲՈԿ միջնորդության հարցը:

- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում իրականացվող Հայ-Բել 18-009 ծածկագրով «Կենսաէլեկտրաքիմիական սարքերում օգտագործվող մանրէային օքսիդոռեդուկտազների ակտիվության օքսիդավերականգնողական կարգավորումը» դրամաշնորհի ղեկավարի փոփոխության հարցը:

ԼՄԵՑԻՆ. Կենսաբանության ֆակուլտետի ղեկանի հաշվետվությունը (01.01.2020թ – 31.12.2020թ) ընթացքում ֆակուլտետում կատարած աշխատանքների վերաբերյալ: Իր խոսքում Է.Ս. Գևորգյանը մանրամասնորեն ներկայացրեց ամբիոններում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական աշխատանքները, անրադարձավ հրատարակված գիտական աշխատանքներին և այլն:

Ստորև ներկայացվում է Է.Ս. Գևորգյանի հաշվետվությունը:

Հարգելի գործընկերներ.

1. Ընդհանուր տեղեկություններ ֆակուլտետի վերաբերյալ

Նախ ուսանողների թվաքանակի մասին: Ներկայումս՝ 2020/21թթ ուստարվա առաջին կիսամյակում ֆակուլտետն ունի 523 սովորող /506 ուսանող և 17 ասպիրանտ/: Այդ թվում՝ առկա համակարգի բակալավրիատում՝ 313, մագիստրատուրայում՝ 137, հեռակա համակարգի բակալավրիատում 56 ուսանող, իսկ առկա և հեռակա ասպիրանտուրայում՝ համապատասխանաբար 4 և 13 ասպիրանտներ /պատկեր 1/: Անկախ ս.թ. մարտ ամսից Հայաստանում մոլեգնող կորոնավիրուսի համավարակից ֆակուլտետում սովորողների /ուսանողների և ասպիրանտների/ ընդհանուր թիվը նույնիսկ ավելացել է 32-ով: Համեմատելով այս ուսումնական տարվա ուսանողների թվաքանակը /506/ վերջին երեք ուս.տարիների ուսանողների թվաքանակի հետ (2019/20 ուստարում՝ 485, 2018/19թթ ուստարում՝ 471, 2017/18թթ ուստարում՝ 526, (պատկեր 2) համոզվում ենք, որ վերջին տարիներին ֆակուլտետում սովորող ուսանողների թվաքանակի փոփոխությունները չնչին են: Ֆակուլտետի ուսանողների թվաքանակը, կարծում եմ, մոտ է իր օպտիմալին /500-600 սովորող/:

2. Ուսումնական աշխատանքներ

Նմանատիպ հաշվետվություններում միշտ նշում էի, որ ֆակուլտետի ուսումնական գործընթացները հաշվետու տարում, ընդհանուր առմամբ, ընթացել են բնականոն հունով, առանց արտակարգ միջադեպերի: Ցավոք, պիտի արձանագրեմ, որ

այս հաշվետու տարում ուսումնական գործընթացներն ընթացել են ոչ բնականոն հունով՝ գարնանը սկսված կորոնավիրուսի համավարակի և դրան գումարած նաև աշնանը փոթորկած պատերազմի պատճառով: Մարտի կեսերից ուսումնական պրոցեսը, հիմնականում, անցավ հեռավար, ինչը, բնականաբար, որոշակի դժվարություններ ստեղծեց թե ուսանողների, դասախոսական անձնակազմի և թե հատկապես համալսարանի ղեկավարության, ֆակուլտետների ղեկնատների համար: Անհրաժեշտ էր շտապ վերափոխել ուսման բոլոր տիպի գործընթացները, ապահովելով դասերի հեռավար անցկացման անհրաժեշտ բոլոր պայմանները, էապես սահմանափակելով ուսանողների, դասախոսական անձնակազմի հաճախելիությունը համալսարան:

Հատկանշական է, որ, ընդհանուր առմամբ, կարողացանք և կարողանում ենք ադապտացվել այս ոչ նորմալ վիճակին /ասում եմ կարողանում ենք, քանի որ դեռևս գտնվում ենք այդ ոչ բնականոն, արհավիրքային վիճակում և դժվար է գուշակել, թե երբ ենք դրանից դուրս գալու/: Իհարկե, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունն այն չէ, բայց համալսարանի ռեկտորատի, ֆակուլտետների ղեկնատների կողմից արվում է ամեն հնարավորը այս դժվար պայմաններում գիտակրթական գործընթացների իրականացման համար: Այս առումով ուզում եմ հատկապես նշել ղեկնաի տեղակալ դոցենտ Կարեն Ղազարյանի, ղեկնատի աշխատակիցներ Մարջան Գևորգյանի և Ռուզան Յորդանյանի նվիրական գործունեությունը, որոնց համար ֆակուլտետում լինելու առումով չկա ոչ մի սահմանափակում, որոնք պատասխանատվության մեծ զգացումով ապահովում են ռեկտորատից ֆակուլտետ ուղարկվող հանձնարարականների փոխանցումը դասախոսական անձնակազմին և ուսանողներին:

Նշվեց, որ հեռավար ուսուցման, համաճարակի և պատերազմի պայմաններում հնարավոր չէ ակնկալել ուսումնական աշխատանքների պատշաճ արդյունավետություն: Այնուամենայնիվ պարզ է, որ նման անսովոր պայմաններում յուրաքանչյուրից, լինի դա դասախոս, թե ուսանող, պահանջվում է առավելագույն պատասխանատվություն, ուժերի գերլարում: Բնական է, որ դրանք տարբեր դրսևորումներ են ունենում տարբեր անհատների մոտ: Այստեղից էլ մեր որոշ դասընթացների թերակատարումը հատկապես անցյալ կիսամյակում, որտեղ իհարկե կային նաև օբյեկտիվ պատճառներ: Ներկայումս օբյեկտիվ դժվարությունների մեծ մասը հաղթահարված է, և դասընթացների ընթացքը մոտ է բնականոնին: Ուսումնական գործընթացներում ստեղծված նման «արտակարգ իրավիճակը» չէր կարող ազդեցություն չունենալ ուսանողների իրական առաջադիմության վրա: Նշում եմ իրական, քանի որ ստեղծված իրավիճակում դասախոսական անձնակազմի չափից

ավելի բարյացակամ վերաբերմունքը, բարձր գնահատականների շոայլումը հասան անընդունելի սահմանների: Հաջորդ պատկերում (պատկեր 3) բերված է ֆակուլտետի երեք բաժիններում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների առաջադիմության արդյունքները: Բակալավրիատի ուսանողության 6,5%-ը (21 ուսանող) սովորել է գերազանց գնահատականներով, ընդ որում նրանց թիվը տարբեր է երեք բաժիններում (8 ուսանող, 5,2%՝ կենսաբանության բաժնում; 11 ուսանող, 10,1%՝ կենսաքիմիայի բաժնում և 2 ուսանող, 4%՝ կենսաֆիզիկայի բաժնում): Ինչպես տեսնում ենք, առջևում կենսաքիմիայի բաժնի ուսանողներն են. նրանք առջևում են նաև հեռացված ուսանողների քանակով /9 հեռացվածներից 4-ը/: Եթե բակալավրիատի ուսանողների առաջադիմության այս ցուցանիշները տրամաբանորեն ընդունելի են, ապա նույնը չի կարելի ասել մագիստրատուրայի ուսանողության համար: Այսպես, 87 մագիստրանտներից 49-ը (!) գերազանցիկներ են /56%/, ընդ որում գերակշռում են 20 գնահատականները: Գերազանցիկների թիվը չափից ավելի է կենսաբանության բաժնում /41 ուսանող/, իսկ կենսաքիմիայի և կենսաֆիզիկայի բաժիններում՝ համապատասխանաբար 5 և 3 ուսանող: Բերված թվերը, կարծեք թե, վկայում են համապատասխան ամբիոնների անձնակազմերի գիտակրթական դրական գործունեության մասին, սակայն համաձայնեք, որ մագիստրանտների կեսից ավելի գերազանցիկների առկայությունը իրատեսական չէ և վկայում է դասախոսների չափից ավելի լիբերալ վերաբերմունքի մասին: Կարծում եմ, որ հատկապես ներկա պայմաններում, կրթական գործընթացի արդյունավետության խիստ նվազման դեպքում բարձր գնահատականների շոայլումն անհանդուրժելի է: Հեռակա ուսուցման համակարգում վիճակը նորմալ է՝ 59-ից 1 գերազանց ուսանող: Ընդհանուր բարյացակամության այս պայմաններում հաշվետու տարում ֆակուլտետից, տարբեր պատճառներով, հեռացվել է 13 ուսանող /11 առկա համակարգի և 2 հեռակա համակարգի/ անցյալ տարվա 19-ի դիմաց:

Ուսանողների գիտակրթական գործունեության ապահովման գործին լծված է ֆակուլտետի ողջ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմը: Այդ թվում՝ ՀՀ ԳԱԱ 2 ակադեմիկոս և 3 թղթակից անդամներ, գիտությունների 12 դոկտոր և ավելի քան 90 թեկնածուներ: Այս պատկառելի գիտակրթական հանրույթը ներկայացված է ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներում՝ 7 ամբիոններում, ֆակուլտետում գործող «Կենսաբանության» ինստիտուտի 9 լաբորատորիաներում և 2 գիտակրթական կենտրոններում՝ «Կիրառական կենսաբանության» գերազանցության կենտրոնում և «Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի» նորարարական կենտրոնում:

Գիտակրթական գործունեության բարելավմանը նպաստում է նաև միջամբիոնային, միջֆակուլտետային նոր հնչեղություն ունեցող մասնագիտացումների բացումը: Ցավոք, այդպիսիք դեռևս չունենք, բայց կարևոր է նաև այլ ֆակուլտետում առկա մագիստրոսական ծրագրերի իրականացմանը մեր ֆակուլտետի մասնագետների մասնակցությունը: Հաշվետու տարում հաջողությամբ շարունակվել է համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացումը մեր ֆակուլտետի վեց ամբիոններում՝ դեղագործության հարակից թեմաների ուղղությամբ: Ուրախ ենք, որ այս երկուստեղ ձեռնտու համագործակցությունը շարունակվում է նաև ներկայում:

Հաշվետու տարում, որն ընդգրկում է 2019/20թթ ուստարվա երկրորդ կիսամյակը և 2020/21թթ ուստարվա առաջին կիսամյակը, ֆակուլտետում գործել են 8 մագիստրոսական ծրագրեր (պատկեր 4): Բացված 8 ծրագրերից 3-ը գործում են Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում և Մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոնում, ընդ որում մագիստրանտների թիվն առաջին կուրսում 26 է, երկրորդում՝ 39: Եվ սա պատահական չէ, քանի որ ամբիոնը և գիտակրթական այս կենտրոնն ապահովված են թե մեծաթիվ ակտիվ գործող մասնագետներով և թե անհրաժեշտ սարքավորումներով: Այս ուսումնական տարում ֆակուլտետի 7 ամբիոններից միայն կենսաաֆիզիկայի ամբիոնում չի բացվել մագիստրոսական ծրագիր: Նկատի ունենալով ամբիոնում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների ծավալը, գործող 2 գիտական լաբորատորիաները հուսով ենք, որ հաջորդ ուստարում հարցը կկարգավորվի:

Հայտնի է, որ կրթության պատշաճ որակի ապահովման գործում շատ կարևոր է արդի ուսումնաստեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, բարձրորակ ռեակտիվների առկայությունը: Պատկերում, հիշեցման կարգով, բերվում է ֆակուլտետում դրանց ձեռքբերման հիմնական չորս աղբյուրները՝ ԵՊՀ-ից ֆակուլտետին հատկացվող փոքրածավալ գումարը (տարեկան 1.650.000 դրամ, որի մեջ մտնում են գրասենյակային ծախսերը, գործուղման, ծառայությունների ձեռքբերման և այլ ծախսերը), ԳՊԿ-ից բազային ֆինանսավորում ստացող Կենսաբանության գ/հ ինստիտուտի 9 գիտական լաբորատորիաների ֆինանսները, թեմատիկ ֆինանսավորման նախագծերի և այլ միջպետական (հայ-ռուսական, հայ-բելոռուսական և այլ նախագծերի) ֆինանսները և, վերջապես, միջազգային դրամաշնորհներից ստացվող գումարները (պատկեր 5):

Հաջող պատկերում (պատկեր 6) բերված է բազային, թեմատիկ և միջազգային ֆինանսավորմամբ ամբիոններում իրականացվող թեմաների քանակը: Ընդգծված առաջատարը, այստեղ նույնպես, Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է, որտեղ իրականացվում է ֆակուլտետում կատարվող 60 ֆինանսավորվող թեմաներից 28 տարաբնույթ ֆինանսավորմամբ թեմաներ: Էապես բարելավվել է վիճակը Կենդանաբանության ամբիոնում /11 թեմա/: Մյուս ամբիոններում ֆինանսավորվող թեմաների քանակը մեկ տասնյակից քիչ է: Իհարկե, նշված թեմաները /ծրագրերը/ շատ տարաբնույթ են և միշտ չէ, որ դրանց մեծ թիվը պայմանավորում է նաև մեծ ֆինանսավորում: Հաջորդ պատկերում (պատկեր 7) տեսնում ենք նշված թեմաներով ամբիոնների ստացվող ֆինանսավորման արժեքները: Նախ նշեն, որ այս աղբյուրներից ֆակուլտետում ստացվող ընդհանուր գումարը հաշվետու տարում նույնպես քիչ չէ՝ 205 միլիոն դրամ, ինչը ավելի քան 35 մլն դրամով ավելի է, քան նախորդ՝ 2019 թվականին /169,4 մլն դրամ/: Այս առումով առաջատարներն են Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնը /67,8 մլն դրամ/ և Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնը /51,9 մլն դրամ/: Ցավոք, նման ֆինանսավորում ընդհանրապես չի ստացել ֆիզիոլոգիայի ամբիոնը:

Խոսել ֆակուլտետի ուսումնական տարածքների քանակի ու վիճակի մասին հաշվետու տարում նպատակահարմար չեմ համարում, քանի որ ուսման պրոցեսը իրականացվել է հիմնականում հեռավար, իսկ տարածքների քանակն էլ միշտ բավարար է եղել: Երևի թե որոշ տարածքների անհրաժեշտ վերանորոգումներից բացի անհրաժեշտ է նշել մասնաշենքի առաջին հարկում, մուտքին առընթեր, տարիներ շարունակ անգործության մատնված նախկին բուֆետի տարածքի վերանորոգումը, որն իրականացվել է ԿԳՄՍ նախարարության հանձնարարությամբ և ֆինանսավորմամբ՝ 2022 թվականին Հայաստանում կայանալիք կենսաբանության միջազգային օլիմպիադայի հանձնախմբի աշխատանքների իրականացման համար:

Ցավոք, հաշվետու տարում, COVID-19-ի պատճառով, տարբեր պրակտիկաների իրականացումը ֆակուլտետում, կամ ուսումնական հանգրվանում կամ թերի է իրականացվել, կամ էլ ընդհանրապես կատարվել է հեռավար: Բնական է նաև, որ ջերմոցը կամ կենդանիների բուծարանը ևս գրեթե չի օգտագործվել:

3. Գիտական աշխատանքներ

Հարգելի գործընկերներ. Գիտեք, որ հատկապես վերջին տասնամյակի ընթացքում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գործունեությունը բարձր գնահատանքի է արժանանում հատկապես միջազգային և

հանրապետական գիտական պարբերականներում հրատարակումների մեծաթիվ քանակի, ինչպես նաև որակի առումով: Հրատարակումների ընդհանուր թվաքանակով ֆակուլտետը համալսարանի մաթեմատիկական և բնագիտական ոլորտի ֆակուլտետների մեջ առաջատարն է /վերջին 5 տարում միայն մեկ անգամ է զիջել ֆիզիկայի ֆակուլտետին/: Իհարկե, հաշվետու տարվա «սպեցիֆիկան» չէր կարող իր բացասական ազդեցությունը չունենար նաև այս առումով: Հաշվետու տարում հրատարակումների ընդհանուր թվաքանակը /170/ զգալիորեն հետընթաց է արձանագրում է նախորդ տարիների և հատկապես անցյալ տարվա ցուցանիշներից /297/ (պատկեր 8): Էապես նվազել է գիտաժողովների թեզիսների թվաքանակը /2019թ-ին՝ 132, այս տարի՝ 55/: Հայաստանից դուրս հրատարակված հոդվածների թվաքանակն էլ է նվազել /անցյալ տարվա 107-ի դիմաց՝ 70/: Եվ եթե նկատի ունենանք, որ հոդվածների մեծ մասը նախորդ տարվա /կամ նույնիսկ տարիների/ ընթացքում կատարված փորձարարական աշխատանքների արդյունք են, ապա հեռանկարը լավատեսություն չի ներշնչում:

Հաջորդ պատկերում տեսնում ենք տարբեր ամբիոնների ներդրումը (պատկեր 9): Այստեղ նույնպես ընդգծված առաջատարը Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնն է՝ 65 հրատարակում /անցյալ տարվա 86-ի դիմաց/: Էապես նվազել են կենսաֆիզիկայի /նախորդ տարվա 67 հրատարակումներից այս տարվա՝ 19/, մ/կ ֆիզիոլոգիայի /36-ից՝ 11/, բուսաբանության և սնկաբանության /24-ից 11/ ամբիոնների ցուցանիշները: Նվազել է նաև գենետիկայի և բջջաբանության, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնների հրատարակումների թվաքանակը: Միայն կենդանաբանության ամբիոնն է արձանագրել հրատարակումների աճ /24-ից՝ 30/: Իհարկե գիտենք, որ հոդվածների գիտական մակարդակի որոշիչը հրատարակումն է միջազգային հեղինակավոր ամսագրերում: Այս առումով հարկ է նշել, որ վիճակը վատ չէ, եթե նկատի ունենանք, որ հաշվետու տարում հոդվածների 1/3-ից կեսը հենց այդպիսի ամսագրերում են տպագրված:

Ամենամյա հաշվետվություններում բերվում էր նաև աշխատակիցների և ուսանողների կարճաժամկետ /մինչև մեկ ամիս/ և երկարաժամկետ տարաբնույթ գործուղումների մասին տեղեկատվությունը: Բնական է, որ գործուղումների քանակը հաշվետու տարում, COVID-19-ի և պատերազմի պատճառով, պետք է էապես քիչ լիներ նախորդ տարիներին արձանագրվածից: Իրոք, նախորդ տարվա 89 գործուղումների դիմաց /դրանցից 77-ը՝ կարճաժամկետ և 12-ը՝ երկարաժամկետ/ հաշվետու տարում եղել է միայն 13 գործուղում, որոնցից 4-ը՝ կարճաժամկետ և 9-ը՝ երկարաժամկետ, ընդ որում ֆակուլտետի 7 ամբիոններից միայն 4-ից են գործուղվել աշխատակիցներ կամ ուսանողներ (պատկեր 10): Երկարաժամկետ 9

գործուղումներից 8-ը բաժին են ընկնում ուսանողներին և ասպիրանտներին: Կարճաժամկետ գործուղումների մեծ մասի նպատակը գիտաժողովներին մասնակցությունն է, ինչը հաշվետու տարում հնարավոր չէր հասկանալի պատճառներով. թերևս միայն առցանց կարելի էր մասնակցել գիտաժողովներին, ինչպես արել են կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի մասնագետները ամբիոնի վարիչ Ա.Թռչունյանի ղեկավարությամբ:

Հասկանալի է, որ հաշվետու տարում խոսել միջազգային համագործակցության, արտասահմանյան գիտնականների այցելությունների, ֆակուլտետում գիտաժողովների կազմակերպման և գիտակրթական գործընթացները խթանող այլ միջոցառումների մասին իրատեսական չէ: Ֆակուլտետի գործունեության այլ բնագավառների մասին ևս էական ոչինչ չկա տեղեկացնելու: Գիտական խորհրդի /գիտքարտուղար՝ Իրեն Շահազիզյան/, Արհբյուրոյի /նախագահ՝ Սեդա Մարության/ գործունեությունը իրականացվել է համահունչ ստեղծված իրավիճակին: Նույնը վերաբերում է նաև ուսխորհրդին և ուսանողական գիտական ընկերությանը:

Ի մի բերելով, հուսանք, որ հաշվետու տարին վերջինը կլինի թե համաճարակի և թե պատերազմական գործողությունների տեսակետից:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի ղեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ ԵՈՂ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտների գիտական ղեկավարների փոփոխության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, ղեկանի տեղակալ, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ՝ կ.գ.թ. Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Թռչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ առաջարկել նոր գիտական ղեկավարներ.

- Առկա ուսուցման ասպիրանտ *Սուսաննա Աշոտի Գևորգյան*

Թեմա՝ «Մետաղական և կենսաբանորեն ակտիվ միացությունների նանոմասնիկների ազդեցությունը կենդանի բջիջների վրա»:

Մ.Ա. Գևորգյանի նոր գիտական ղեկավար առաջարկել ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոշունյանին:

- Առկա ուսուցման ասպիրանտ **Անահիտ Համբարձումի Շիրվանյան** Թեմա՝ «Որոշ խմորասնկերի աճի և հակաօքսիդանտային ֆերմենտների ակտիվության վրա սթրեսային գործոնների ազդեցության մեխանիզմները»:

Ա.Հ. Շիրվանյանի նոր գիտական ղեկավար առաջարկել ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոշունյանին:

- Հեռակա ուսուցման ասպիրանտ **Անահիտ Վարդանի Մամիկոնյան** Թեմա՝ «L-արգինինի նյութափոխանակության որոշ ֆերմենտների ակտիվության կարգավորումը կրծքագեղձի քաղցկեղի փորձարարական մոդելում»:

Ա.Վ. Մամիկոնյանի նոր գիտական ղեկավար առաջարկել ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ. Ա. Թոշունյանին:

- Հեռակա ուսուցման ասպիրանտ **Իրինա Մամվելի Այվազյան** Թեմա՝ «Հայաստանի պղնձի հանքապարներից և պոչամբարներից մեկուսացված մանրէների մետաղակայունության մեխանիզմների առանձնահատկությունները»:

Ի.Ս. Այվազյանի նոր գիտական ղեկավար առաջարկել ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հ.Հ. Փանոսյանին:

- Հեռակա ուսուցման ասպիրանտ **Ռազմիկ Ռուբենի Մարգարյան** Թեմա՝ «ՀՀ էպիֆիտային քարաքոսերի կենսաքիմիական հատկությունների և կենսատեխնոլոգիական ներուժի ուսումնասիրությունը»:

Ռ.Ռ. Մարգարյանի նոր գիտական ղեկավար առաջարկել ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հ.Հ. Փանոսյանին:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտներին որպես թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարներ հանդես գալու թույլատվության համար ԲՈԿ միջնորդության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, ղեկանի տեղակալ, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ՝ կ.գ.թ. Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և

կենսաստեխնոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Թոչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսաստեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. **Ա.Ա. Փուլադյանի** փորձն ու գիտական գործունեության ծավալը (գիտական հոդված՝ 37, թեզիս՝ 37, գրքի գլուխ՝ 2, ուսումնամեթոդական ձեռնարկ՝ 2) և ամբիոնի կարծիքը, միջնորդել ԲՈԿ-ին թույլատրելու **Ա.Ա. Փուլադյանին** Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/, թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու համար:

Հաշվի առնելով կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսաստեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. **Լ.Ս. Գաբրիելյանի** փորձն ու գիտական գործունեության ծավալը (գիտական հոդված՝ 45, թեզիս՝ 81, գրքի գլուխ՝ 5, ուսումնամեթոդական ձեռնարկ՝ 1) և ամբիոնի կարծիքը, միջնորդել ԲՈԿ-ին թույլատրելու **Լ.Ս. Գաբրիելյանին** Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/, թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու համար:

Հաշվի առնելով կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսաստեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. **Ս.Վ. Մարությանի** փորձն ու գիտական գործունեության ծավալը (գիտական հոդված՝ 37, թեզիս՝ 24, ուսումնամեթոդական ձեռնարկ՝ 1) և ամբիոնի կարծիքը, միջնորդել ԲՈԿ-ին թույլատրելու **Ս.Վ. Մարությանին** Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ /բնագավառ՝ կենսաբանական գիտություններ/, թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավար հանդես գալու համար:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսաստեխնոլոգիայի ամբիոնում իրականացվող Հայ-Բել 18-009 ծածկագրով «Կենսաէլեկտրաքիմիական սարքերում օգտագործվող մանրէային օքսիդոռեդուկտազների ակտիվության օքսիդավերականգնողական կարգավորումը» դրամաշնորհի ղեկավարի փոփոխության հարցը:


ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, ղեկանի տեղակալ, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ՝ կ.գ.թ. Կ.Ա. Ղազարյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսաստեխնոլոգիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Թոչունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆՆԵՐ՝ Հայ-Բելառուսական 18-009 ծածկագրով դրամաշնորհի նոր ղեկավար նշանակել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոչունյանին:

Գիտական խորհրդի նիստի ընթացքում դեկանի տեղակալ, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կ.Ա. Ղազարյանի կողմից բարձրացվեցին և քննարկվեցին որոշ հարցեր ուսումնական գործընթացների, կրթական ծրագրերի հեռավար ուսուցման հնարավորությունների, ինչպես նաև գիտելիքների ընթացիկ ստուգման կազմակերպման ուղղությամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝



Ի.Վ. Շահազիզյան